ըիշ քանի մի սուտ Աղուանների դաւերով, բարբարոսները ըսպանեցին երանելոյն, ձիերին կոխկրտել տալով Վատնեան դաշտում, Կասպիական կոչուած ծովի մօտ"։

«Մ. Խորենացի, թարգմ. Խ. Ծ-Վ. Ս. Գլուխ Գ.։ Բիւզանդ Փաւստոսը հետեւեալն է ասում.

«Կալան ձի մի ամեհի, կապեցին, կախեցին զմանուկն Գրիգորիս զպզուոյ ձիոյն և արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովի մեծի արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ։ Եւ այպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս"։ (Բիւզանդարան Գ. 6.)։

«Պէտք է նկատած, որ Մօլլա Խալիլում գտնուած մատուռը միմիայն Գրիգորիսի նահատակութեան՝ տեղացւոց ասելով, արիւն թափած տեղն է։ Նահատակութիւնից յետոյ իւր աշակերտները տարան մարմինը Սիւնեաց[1]) Ամարաս աւանում թաղեցին, որն և, ինչպէս ասում է Մովսէս Կաղանկատացին (Ա. Հատոր 14րդ Գլուխ). 489 թուին դտել է Աղուանից Վաչական թագաւորը։

«Թէ խսկապէս ո՞ր աշխարհների վրայ է Կաթուղիկոսութիւն արել սուրբ Գրիգորիսը, այս հարցին իրենք՝ մատենագիրներն են պատասխանում, թէ և տարբեր կերպով։

«Մ. Խորենացին ասում է, որ սուրբ Գրիգորիսը եղել է Աղուանից և Փայտակարան աշխարհի Կաթուղիկոս։ Իսկ Բիւզանդ Փաւստոսը համարում է նրան նաեւ Վրաց, Աղուանից, ձիներց և Մազքթաց Կաթուղիկոս։

«Ընդունելով Բիւզանդի ասածը, մենք պիտի եզրակացնենք, որ սուրբ Գրիգորիս քարոզելով շրջել է Աղուանքը և Փայտակարան և ապա անցնելով դէպ ի հիւսիս, նախքան Մազքթաց աշխարհն անցնելու, պիտի քարոզէր Կասբքում, Զրուանքում, ձեղայքում, Լփնիքում, և ապա, թէ Մազքթաց աշխարհում, այսինքն մինչեւ Թերէք գետի հարաւային ափերը։

«Սուրբ Գրիգորիսի մատուռը, ըստ Վենետիկեան Քարտէ-

---

[1]) Ամարաս գտնվում է Արցախ նահանգի հարաւային կողմին Երասխի մօտերին։ Վարանդայ գաւառում։